



Արթուր Գրիգորյան
փաստաբան (տնօրեն)

Անի Ներսիսյան
տնօրենի օգնական

Վազգեն Լալայան
փաստաբան

«Զի ընդ Այ» ՍՊԸ
փաստաբանական գրասենյակ

© G & I © LLC
Chambers

Երևան 0023, Արշակունյաց 2, 526 սենյակ
Arshakunyants street 2, 526 room,
Yerevan 0023, Armenia
Էլ-փոստ/e-mail:
artlaw@web.am

Artur Grigoryan
Attorney-at-Law (Director)

Ani Nersisyan
Director's Assistant

Vazgen Lalayan
Attorney-at-Law

28/12/2009
No. 281/AG

Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քաղաքացիական դատարանին

Հայցվոր (բողոք բերած անձ)

«ԱՐԱՐԱՏ» ռազմավարագիտական կենտրոն
հասարակական կազմակերպություն

Պատասխանող

«ԿՈՎԿԱՍԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ» հիմնադրամ

ՎԵՐԱՔՆՆԻՉ ԲՈՂՈՔ

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 2009 թվականի դեկտեմբերի 4-ի վճռով թիվ ԵԿԴ/2246/02/09 քաղաքացիական գործի վարույթը կարճվել է՝ վեճը դատարանում քննության ենթակա չլինելու հիմքով:

I. Գործի դատավարական նախապատմությունը

2009 թվականի սեպտեմբերի 17-ին «ԱՐԱՐԱՏ» ռազմավարագիտական կենտրոն հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ Հայցվոր) հայց է ներկայացրել Դատարան ընդդեմ «ԿՈՎԿԱՍԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ» հիմնադրամի (այսուհետ՝ Պատասխանող)՝ հայոց ցեղասպանության եղելությունը վիճարկող հրապարակման հերքումը պարտավորեցնելու, ցեղասպանություն բառի չակերտավոր կիրառումն արգելելու և վնասի հատուցման պահանջի մասին:

Դատարանի 2009 թվականի սեպտեմբերի 22-ի որոշմամբ հայցադիմումը, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Քաղաքացիական դատավարության օրենսգրք) 92-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետով սահմանված հիմքով, վերադարձվել էր: Դատարանն իր նշված որոշման հիմքում դրել էր այն հանգամանքները, որ հայցադիմումին կից ներկայացված փաստաթղթերի մի մասը թարգմանված չի եղել հայերեն, ինչպես նաև պակաս է վճարված եղել պետական տուրքը:

Դատարանի վերը նշված որոշմամբ մատնանշված թերությունները սահմանված ժամկետում վերացնելուց հետո՝ Հայցվորն իր հայցադիմումը կրկին ներկայացրել է Դատարան:

Դատարանը, արձանագրելով, որ հայցադիմումը ներկայացվել է Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 87-րդ և 88-րդ հոդվածներին համապատասխան, 2009 թվականի հոկտեմբերի 7-ին որոշել է այն ընդունել վարույթ և գործը նախապատրաստել դատաքննության:

Գործով 2009 թվականի դեկտեմբերի 3-ին նշանակված նախնական դատական նիստին Պատասխանողի ներկայացուցիչը միջնորդել է գործի վարույթը կարճել՝ վեճը դատարանում քննության ենթակա չլինելու հիմքով:

2009 թվականի դեկտեմբերի 4-ին Դատարանը վճիռ է կայացրել գործի վարույթը՝ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին կետի հիման վրա, կարճելու մասին:

II. Դատարանի եզրահանգումները

Դատարանը գտել է, որ տվյալ վեճը ենթակա չէ դատարանում քննության, քանի որ Հայցվորը «...որպես պատիվն ու արժանապատվությունն արատավորող տեղեկությունների հերքումը պարտավորեցնելու հայցի առարկա, նշել է որոշակի իրադարձություն, բառի չակերտավոր կիրառումը (որով ըստ [Հ]այցվորի վիճարկվում է իրադարձության լինելու հանգամանքը)՝ այլ անձի կողմից, որպիսի վեճը դատարանում քննության ենթակա չլինելու հիմքով քաղաքացիական գործի վարույթը ...[Ք]աղաքացիական դատավարության օրենսգրքի 109 հոդվածի 1-ին կետի կարգով ենթակա է կարճման»:

Դատարանն իր վճռի մնացած մասը նվիրել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության մեջ բարոյական վնասի փոխհատուցման հնարավորություն ընձեռող նորմի բացակայության հիմնախնդրին, ինչը, ըստ Դատարանի, նույնպես բացառում է վեճը դատարանի քննությանը ենթակա լինելը¹:

III. Դատավարական իրավունքի նորմերի խախտումները

¹ Հայցվորը, ի թիվս այլ պահանջների, խնդրել է Պատասխանողից, որպես խնդրո առարկա հրապարակմամբ իրեն պատճառված 20.000.000 ՀՀ դրամ ընդհանուր գումարով բարոյական վնասից բռնագանձել 1 (մեկ) խորհրանշական (պայմանական) դրամը:

1. Հիմնական երաշխիքներ.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (այսուհետ՝ Սահմանադրություն) 3-րդ հոդվածում ամրագրված է, որ մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են: Պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան: Պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք:

Սահմանադրության 18-րդ հոդվածի համաձայն, յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք, իսկ 19-րդ հոդվածը սահմանում է, որ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու (...) համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

Սահմանադրության 6-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն, միջազգային պայմանագրերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են: Եթե վավերացված միջազգային պայմանագրում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են այդ նորմերը:

Հայաստանի Հանրապետության կողմից 2002 թվականի ապրիլի 26-ին վավերացված՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետը (այսուհետ նաև 6-րդ հոդվածի 1-ին կետ) սահմանում է, որ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները (...), ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ Եվրոպական դատարան), որի իրավասությունը, Կոնվենցիայի 32-րդ հոդվածի համաձայն, տարածվում է այն բոլոր հարցերի վրա, որոնք վերաբերում են Կոնվենցիայի և նրան կից Արձանագրությունների դրույթների մեկնաբանմանն ու կիրառմանը, այս կամ այն մասնակից պետության նկատմամբ կայացված իր բազմաթիվ վճիռներում, անդրադառնալով արդար դատաքննության իրավունքի չափանիշների հարցին, նշել է, որ այդ իրավունքը ներառում է, *inter alia*, քաղաքացիական իրավունքների և պարտականությունների առնչությամբ դատարան հայց հարուցելու և այն ըստ էության քննության առարկա դարձնելու իրավունքը (տե՛ս, *mutatis mutandis*, *Golder v. the United Kingdom*, no. 4451/70, judgment of 21 February 1975, §§ 26-36):

2. 6-րդ հոդվածի 1-ին կետի կիրառելիությունը տվյալ գործով.

Եվրոպական դատարանը, անդրադառնալով «քաղաքացիական իրավունքների և պարտականությունների» առնչությամբ ծագած վեճի հարցին, մասնավորապես, նշել է, որ 6-րդ հոդվածի 1-ին կետը տարածվում է «վիճարկումների» (վեճերի) վրա՝ (քաղաքացիական) «իրավունքների» ներքո, ինչի մասին առնվազն կարող է վկայել ներպետական օրենսդրությամբ ճանաչված՝ ապացուցման ենթակա հիմքերի առկայությունը, անկախ նրանից, թե արդյոք դրանք, միաժամանակ, պաշտպանվում են նաև Կոնվենցիայով (տե՛ս, ի թիվս այլոց, *Neves e Silva v. Portugal*, judgment of 29 March 1989, no. 11213/84 վերը նշված *Golder v. the United Kingdom*, § 33, ինչպես նաև *H. v. Belgium*, judgment of 30 November 1987, Series A no. 127-B, p. 31, para. 40).

Տվյալ դեպքում, հայցի առարկան հայոց ցեղասպանության եղելությունը վիճարկող հրապարակումները Պատասխանողին հերքել պարտավորեցնելն է, ցեղասպանություն բառի չակերտավոր կիրառումն արգելելը և նշված հրապարակումներով պատճառված վնասի հատուցումը:

Հայցվորը, որպես հայցի հիմքում ընկած փաստական հանգամանքների նկատմամբ կիրառման ենթակա իրավական նորմ, *inter alia* հիմնվել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 19-րդ հոդվածի վրա, Դատարանի ուշադրությունը, միաժամանակ, հրավիրելով հայցի հարուցմամբ հետապնդվող հետևյալ իրավաչափ նպատակների վրա.

ա) Հայոց ցեղասպանության ճանաչումը և դատապարտումը հանդիսանում են Հայաստանի Հանրապետության քաղաքականության և ազգային անվտանգության ռազմավարության բաղկացուցիչ մասը, հետևաբար, որևէ կերպ դրա հերքումը, ժխտումը, մեղմացումը, դրա կատարված լինելու վերաբերյալ ցանկացած կասկածի դրսևորումը, այդ թվում ցեղասպանություն բառի չակերտավոր կիրառումը ոտնձգություն են՝

- (i) Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության,
- (ii) հանրային շահի,
- (iii) հանրության բարքերի,
- (iv) սահմանադրական կարգի,
- (v) ինչպես նաև Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման գործում շահագրգիռ անձանց, ներառյալ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների իրավունքների ու օրինական շահերի դեմ:

բ) Ցեղասպանության հերքումը հանդիսանում է միջազգային նախադեպային և սովորութային իրավունքի խախտում, դատական պրակտիկայի անտեսում:

գ) Ցեղասպանության հերքումը ճանաչվում է ցեղասպանության անբաժանելի մաս, որը ևս քրեականացված է մի շարք երկրներում: Այսինքն՝ ցեղասպանությունն արգելված է նաև միջազգային սովորութային իրավունքով, որը հավելյալ պարտականություններ է նախատեսում և՛ պետությունների, և՛ անհատների համար:

Իր հայցադիմումում Հայցվորը նաև նշել է. «...խնդրո առարկա հողվածի տպագրումով, Հայոց ցեղասպանությունն ուղղակիորեն հերքելով և չակերտների մեջ առնելով՝ [Պատասխանողը] ոտնահարել և անտեսել է վերոնշյալ իրավական պահանջները: Սա հիմք է տալիս ենթադրելու, որ [Պատասխանողը] միջնորդավորված կերպով նպաստում է Թուրքիայի հակահայկական ռազմավարության իրականացմանը: Ըստ այդմ, ցեղասպանության երևույթը կանխարգելելու և դատապարտելու նպատակով պետք է բացառել Հայոց ցեղասպանությունը որևէ ձևով հերքելը, այդ թվում՝ այն չակերտների մեջ առնելը: Համոզված ենք, որ [Դ]ատարանի վճիռը նախադեպ կձառայի այդ նպատակին հասնելու համար և համանման խախտումները կանխարգելելու համար»:

Այսպիսով, Հայցվորը ծանրակշիռ փաստարկներով վիճարկել է խնդրո առարկա հրապարակումների թույլատրելիությունը՝ ակնկալելով, որպեսզի կայացվելիք դատական ակտը որոշակի լուծում տա քաղաքացիաիրավական այս վեճին: Հետևապես Հայցվորն ունեցել է *locus standi*, այսինքն՝ որպես տվյալ վեճի կողմ իրավունք ունեյ լսված լինել դատարանում:

2. Կիրառված սահմանափակման իրավաչափության հարցը.

Եվրոպական դատարանը նաև նշել է, որ դատական պաշտպանության իրավունքը, որի բաղադրիչներից մեկն է դատարան դիմելու իրավունքը, բացարձակ չէ և կարող է ենթարկվել որոշակի սահմանափակումների: Բայց և այնպես, կիրառվող սահմանափակումները չպետք է նեղացնեն կամ նվազեցնեն անձի իրավունքներն այնպես կամ այն աստիճան, որ թուլացնեն իրավունքի բուն էությունը: Ընդ որում, սահմանափակումն անհամատեղելի կլինի 6 հողվածի 1-ին կետի հետ, եթե այն իրավաչափ նպատակ չհետապնդի և, եթե չլինի ողջամիտ հավասարակշռության կապ գործադրված միջոցների և հետապնդվող նպատակի միջև (տե՛ս, *mutatis mutandis*, *Paykar Yev Haghtanak Ltd. v. Armenia*, no. 21638/03, judgment of 20 December 2007, § 44; *Khalfaoui v. France*, no. 34791/97, § 35, ECHR 1999-IX, and *Papon v. France*, no. 54210/00, § 90, ECHR 2002-VII; *Guérin v. France*, judgment of 29 July 1998, *Reports* 1998-V, p. 1867, § 37; *Zvolský and Zvolská v. the Czech Republic*, judgment of 12 February 2003, §§ 46-47):

Սույն գործով, Դատարանի կողմից Հայցվորի արդար դատաքննության իրավունքի սահմանափակումը անհամատեղելի է եղել Սահմանադրության և Կոնվենցիայի վերը թվարկված չափանիշների հետ, քանի որ այն, նախնառաջ, *prima facie* հակասել է օրենքի պահանջներին, իսկ այնուհետև՝ որևէ իրավաչափ նպատակ չի հետապնդել կամ, բոլոր դեպքերում, եղել է ակնհայտ անհամաչափ:

Այսպես, Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հողվածի 1-ին կետը սահմանում է, որ Դատարանը կարճում է գործի վարույթը, եթե վեճը ենթակա չէ դատարանում քննության: Դատավարական իրավունքի նշված նորմը նկատի ունի այնպիսի իրավիճակներ, երբ Սահմանադրության և օրենքում արված հատուկ վերապահումների ուժով (*ipso jure*) տվյալ կատեգորիայի վեճը ենթակա չէ դատարանին (օրինակ՝ ինքնակամ կառույցն

օրինականացնելու պահանջի վերաբերյալ վեճը, կամ օրենքի որևէ դրույթ Սահմանադրությանը հակասող ճանաչելու վերաբերյալ պահանջը, որը, ինչպես հայտնի է, վերապահված է Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի բացառիկ իրավասությանը): Այլ կերպ ասած, «վեճը ենթակա չէ դատարանում քննության» եզրույթի տակ օրենսդիրը նկատի է ունեցել ոչ թե խնդրո առարկա հայցի էությունը՝ դրանում շարադրված փաստերի և իրավական հիմնավորումների լուսի ներքո, այլ ընդամենը հայցի առարկան:

Հայցվորը, տվյալ դեպքում, ընդդեմ Պատասխանողի ներկայացրել է իրականությանը չհամապատասխանող տեղեկությունները հերքելուն պարտավորեցնելու և պատճառված վնասի հատուցման՝ միմյանց հետ փոխկապակցված հայցապահանջներ: Եվ եթե Դատարանը իրոք գտնում էր, որ նշված վեճը, որպես այդպիսին, ենթակա չէ դատարանում քննության, ապա նա պարտավոր էր մատնանշել օրենսդրական այն արգելքը, որը դատարանին թույլ չի տալիս գործ ունենալ նման կատեգորիայի հայցերի հետ: Այս դեպքում, Դատարանը նաև պարտավոր էր մատնանշել այն մարմինը, որին, դատարանի փոխարեն, պատկանում է տվյալ վեճը լուծելու իրավասությունը (ինչպես, օրինակ, Երևան քաղաքում իրականացված ինքնակամ կառուցներն օրինականացնելու իրավասությունը, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի համաձայն, վերապահված է Երևանի քաղաքապետին):

Բնականաբար, Դատարանը սույն վեճի լուծման որևէ այլ կարգ մատնանշել չէր կարող, քանի որ անձի (այդ թվում՝ իրավաբանական անձի) պատվի և արժանապատվության դատական պաշտպանության իրավունքը, ինչպես նշվեց, *inter alia*, երաշխավորված է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Քաղաքացիական օրենսգիրք) 19-րդ հոդվածով, իսկ վնասի հատուցման իրավունքը՝ Քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածով և նույն 19-րդ հոդվածով՝ երբ խոսքը հատկապես գնում է իրականությանը չհամապատասխանող և անձի պատիվն ու արժանապատվությունը արատավորող տեղեկությունների տարածմամբ պատճառված վնասի հատուցման մասին:

Սույն գործի դատավարական նախապատմությունը, թերևս, ավելի քան համոզիչ կերպով ցույց է տալիս, որ Դատարանն ինքն է համոզված եղել, որ գործի վարույթը կարճելու որևէ հիմք չի սկզբանե չի եղել, իսկ Դատարանի՝ այս առթիվ բերած պատճառաբանություններն առնվազն կրում են արհեստական բնույթ: Այլապես, եթե գործի վարույթը նման հիմքով կարճելը իրոք Դատարանի համոզմունքն է եղել, այլ ոչ թե պահի տակ առաջ եկած «անհրաժեշտություն», ապա 2009 թվականի սեպտեմբերի 22-ին Դատարանը պետք է որոշում կայացներ ոչ թե հայցադիմումը վերադարձնելու, այլ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 91-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված հիմքով պետք է մերժեր դրա ընդունումը, քանի որ վեճը դատարանում քննության ենթակա չլինելը, առաջին հերթին, ոչ թե գործի վարույթը կարճելու, այլ հայցադիմումի ընդունումը մերժելու հիմք է:

Ինչ խոսք, երբեմն լինում են դեպքեր, երբ հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ գործը դատաքննության նախապատրաստելիս կամ

դատաքննության ժամանակ, ի հայտ են գալիս այնպիսի ծանրակշիռ փաստեր, որոնք ամբողջովին փոխում են գործի հետագա ընթացքը և անվերապահորեն հաստատում գործի վարույթը կարճելու անհրաժեշտությունը: Սակայն այդպիսին չի եղել տվյալ գործի դատավարական նախապատմությունը. Դատարանի կողմից հայցադիմումը վարույթ ընդունվելուց հետո տեղի է ունեցել ընդամենը մեկ նախնական դատական նիստ, որը սկսվելուն պես պարզվել է, որ Պատասխանողը Դատարանի գրասենյակ հապճեպ հասցրել է ներկայացրել մի միջնորդություն, որի քննարկման արդյունքում էլ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին կետի կիրառման առանձնահատկությունների վերաբերյալ Դատարանի՝ մինչ այդ ունեցած պատկերացումները արմատապես փոխվել են:

Այսպիսով, Դատարանը գործի վարույթը Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված հիմքով կարճելու տակ նկատի է ունեցել այնպիսի դատողություններ, որոնք վերաբերում են հայցի բուն էությանը և կարող են գնահատվել միմիայն հիմնավորվածության տեսանկյունից և այն էլ՝ գործի դատաքննության արդյունքում: Հակառակ դեպքում ստացվում է, որ ցանկացած հայցի քննություն կարող է նմանօրինակ ոճով անմիջապես դադարեցվել, իսկ հայցվորը՝ զրկվել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված գործի դատաքննության իրավունքից:

Դատարանն, ըստ էության, այլ բան չի արել, քան գործի վարույթը կարճելու քողի տակ իրականացրել է արագացված դատաքննություն, որի նպատակն է եղել այնպիսի վճիռի կայացումը, որը բացառի հայցի բավարարումը:

Անդրադառնալով Դատարանի բուն պատճառաբանություններին, հարկ է նկատել, որ այդպիսիք *per se* բավականին կցկտուր են և հակասական:

Այսպես, թե ինչու է Դատարանը Հայցվորի կողմից որոշակի իրադարձություն նշելը համարել դատարանում վեճի քննությունը բացառող հանգամանք՝ առնվազն անհասկանալի է: Կարելի է միայն ենթադրել, որ ըստ Դատարանի՝ դատարանի քննությանը ենթակա են միայն այնպիսի վեճեր, որոնցում բացակայում են մատնանշումները որոշակի իրադարձությունների: Սակայն այս դեպքում հարց է ծագում. առանց որոշակի իրադարձության ի՞նչ վեճ կարող է լինել, որը քննության ենթակա լինի կամ չլինի (այս՝ հիրավամբ բարդ դատողության վերծանումը հայցվոր կողմի հնարավորություններից վեր է):

Ինչ վերաբերում է բարոյական վնասի հատուցմանը, ապա Դատարանը նախ իրավացիորեն նշել է, որ դա նախատեսված է միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերով, մասնավորապես՝ Կոնվենցիայով: Դրա հետ մեկտեղ, Դատարանը եկել է այն համոզման, որ այս հարցը, այնուհանդերձ, «... ՀՀ օրենսդրությունում չունի իր կարգավորումը», որից հետևություն է արել, որ գործի վարույթն այս մասով ... ևս ենթակա է կարճման:

Նման հետևությունը, առաջին հերթին, պայմանավորված է Սահմանադրության 6-րդ հոդվածի 4-րդ մասի չկիրառմամբ, որի համաձայն, միջազգային պայմանագրերը Հայաստանի Հանրապետության իրավական

համակարգի բաղկացուցիչ մասն են: Ավելին՝ եթե վավերացված միջազգային պայմանագրում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են այդ նորմերը:

Այդուհանդերձ, սույն բողոքի առարկան դեռևս բարոյական վնասի փոխհատուցման հնարավորություն ընձեռող նորմերի կիրառելիության հարցը որոշելը չէ: Հարցը կայանում է նրանում, թե ինչ ընդհանուր բան կա այս հարցի և Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին կետի պահանջի միջև:

Վերոգրյալից ելնելով և նկատի ունենալով, որ օրենքով սահմանված հիմքերի բացակայության պայմաններում Դատարանը հրաժարվել է արդարադատություն իրականացնելուց, հաշվի առնելով Հայցվորի՝ արդար դատաքննության իրավունքի պատշաճ իրականացումն ապահովելու անհրաժեշտությունը, ղեկավարվելով Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 205-րդ հոդվածով,

Խնդրում եմ՝

բեկանել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 4-ի վճիռը և գործն ուղարկել նոր քննության:

Կից ներկայացնում եմ՝ հայցվորի ներկայացուցչի իրավասությունները հավաստող լիազորագիրը, սույն բողոքը պատասխանողին և դատական ակտ կայացրած դատարան ուղարկելու մասին փոստային անդորրագրերը:

Արթուր Գրիգորյան
հայցվորի ներկայացուցիչ